

**ԱՐԺԵՔԱՎՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ\***

Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., под ред. Армана Киракосяна, Ереван, «Тигран Мец», 2010, 330с.<sup>1</sup>

1945 թվականին ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված՝ հայկական տարածքները վերադարձնելու պահանջը Հայկական հարցի նորագույն շրջանի պատմության շրջադարձային իրադարձություններից մեկն է, որն ունի բազմաթիվ վիճելի և մութ էջեր: Մոտ կես դար խորհրդային պատմաբանների կողմից հասկանալի պատճառներով այն մոռացության է մատնվել, իսկ թուրք և արևմտյան հեղինակները սահմանափակվել են մեկ-երկու նախադասությամբ՝ արձանագրելով, որ Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ը Թուրքիայից պահանջել է Կարսն ու Արդահանը: Թեման հիմնականում շոշափվել է հայկական Սփյուռքը ներկայացնող հեղինակների աշխատություններում, սակայն վերջիններիս ոչ բավարար տեղեկացվածությունը թույլ չի տվել վերականգնել իրադարձությունների իրական պատկերը:

Թեև ԽՍՀՄ-ի փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո խորհրդաթուրքական հարաբերությունների հետպատերազմյան շրջանի վերաբերյալ լույս են տեսել առանձին հրապարակումներ, սակայն դրանք չեն ապահովել խնդրի բազմակողմանի ուսումնասիրությունը նախ և առաջ՝ համապատասխան արխիվային փաստաթղթերի սակավության պատճառով: **Այս թեմայի համակողմանի լուսաբանման համար բացառիկ կարևորություն ունեն ԽՍՀՄ իշխանության ղեկավար մարմինների՝ Մոսկվայում պահվող փաստաթղթերը, որոնց մի մասի վրայից մինչ օրս չի հանվել գաղտնիության կնիքը:**

Ուստի, ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական տեսանկյունից չափազանց կարևոր է ՀՀ արտաքին գործերի փոխնախարար, պատմական գիտությունների դոկտոր Արման Կիրակոսյանի խմբագրությամբ ռուսերենով հրատարակված «Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1946 թթ. դիվանագիտական փաստաթղթերում» գիրքը, որը բաղկացած է առաջաբանից, երկու բաժիններից և անձնանունների ու տեղանունների ցանկերից:

Ժողովածուի խմբագիր Ա. Կիրակոսյանն իր ընդարձակ՝ մոտ 50 էջանոց առաջաբանում հատկորեն ներկայացնում է նրանում տեղ գտած փաստաթղթերի հրապարակման նպատակը և փոքր, բայց և ամբողջական ակնարկով անդրադառնում Հայկական հարցի պատմությանը: Հեղինակը Հայկական հարցի պատմությունը դիտարկում է ռուս-թուրքական, հայ-թուրքական և խորհրդա-թուրքական հարաբերությունների համատեքստում: Միանգամայն իրավացի է Ա. Կիրակոսյանը,

\* Ընդունվել է տպագրության 26.11.2010.:

<sup>1</sup> Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1946 թթ. դիվանագիտական փաստաթղթերում, Արման Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., «Տիգրան Մեծ», 2010, 330 էջ:

*Բ (Ը) ԳԱՐԻ, ՔԻՎ 4 (32) ԽՈԿՐԵՆԵՐ-ՂԵԿՐԵՆԵՐ 2010*

*ՎԵՄ ԿԱՄԱՆԱԿԱՅԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ*

երբ խորհրդա-թուրքական հարաբերությունները տարանջատում է երեք հիմնական փուլերի: **Առաջին** փուլն ընդգրկում է երկու երկրների միջև հարաբերությունների հաստատումից մինչև 1930-ական թթ. երկրորդ կեսը, հեղինակի բնորոշմամբ՝ «բարիդրացիական հարևանության և ընկերության» շրջանը, **երկրորդը**՝ 1930-ական թթ. վերջից մինչև 1960-ական թթ. սկիզբը՝ «վստահության ճգնաժամի» ժամանակաշրջանը, իսկ **երրորդը**՝ 1960-ականների սկզբից մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը՝ «բարիդրացիական հարևանության և համագործակցության» շրջանը<sup>2</sup>:

Առաջաբանում Ա. Կիրակոսյանը փորձում է հակիրճ, սակայն փաստարկված կերպով ներկայացնել խորհրդա-թուրքական հարաբերությունների զարգացման այս երեք փուլերը: Միանշանակորեն կարող ենք ասել, որ «Առաջաբանը» ունի ոչ միայն գիտական, այլև կիրառական մեծ նշանակություն: Ավելին՝ այստեղ ներկայացված հետաքրքրական փաստերը, առաջ քաշված դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել հայ-թուրքական, ռուս-թուրքական և խորհրդա-թուրքական հարաբերություններին ու Հայկական հարցին մվիրված ուսումնասիրությունների համար:

Գրքի ամենաարժեքավոր մասն առաջին բաժինն է, որում ընդգրկված են 1945-1946 թթ. Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար Սահակ Կարապետյանի պատրաստած «Հայկական տարածքների գրավումը Թուրքիայի կողմից» խորագիրը կրող N 410 թղթածրարի նյութերը: Հետաքրքիր է, որ այս թղթածրարը մշտապես գտնվել է ՀԽՍՀ-ի արտգործնախարարների մոտ և չի հանձնվել արխիվ, իսկ վերջին երեք տասնամյակում պահվել է Արման Կիրակոսյանի հոր՝ 1975-1985 թթ. Հայաստանի ԽՍՀ-ի արտգործնախարար, նշանավոր պատմաբան Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվում և այժմ հանձնվել է Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) տնօրինությանը: 19 փաստաթղթերից կազմված այս գործը, որի ստեղծման նպատակն էր հիմնավորել 1945 թվականին ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված Կարսն ու Արդահանը վերադարձնելու պահանջը, առաջին անգամ է ներկայացվում հանրության դատին: Նկատենք, որ թղթածրարում տեղ գտած փաստաթղթերի մի մասին՝ առանձին գործերով, կարող ենք հանդիպել ՀԱԱ ֆոնդ 326-ում: Սակայն, չնայած այդ ամենին, N 410 թղթածրարը խիստ հարուստ է թեմայի ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուրներ հանդիսացող նյութերով: Թղթածրարը առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև այն պատճառով, որ այստեղ 1945-1946 թթ. տարածքային պահանջատիրությանը վերաբերող փաստաթղթերը ամփոփված են մեկ ընդհանուր գործում և ամփոփ տեղեկատվություն են տալիս Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հայկական հարցի շուրջ ընթացած դիվանագիտական գործընթացի մասին:

Թղթածրարում ընդգրկված փաստաթղթերից հատկանշական է 1945 թ. մայիսի 3-ին Հայկական ԽՍՀ արտգործնախարար Ս. Կ. Կարապետյանի՝ ԽՍՀՄ-ի արտգործնախարարի տեղակալ Ս. Ի. Քավթարաձեին ուղղված «Թուրքիային անցած մախկին հայկական տարածքների և արտերկրում ապրող հայերի Հայրենիք վերադառնալու հնարավորությունների մասին» զեկուցագիր-գրությունը<sup>3</sup>: Ինչպես այդ ժամանակաշրջանի բոլոր փաստաթղթերում, այս գրությունում ևս տեղեկատվական նպատակներով տրվում է Հայկական հարցի պատմության հա-

2 Նույն տեղում, էջ 5:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 63-90:

մառտտ ակնարկը, որին հաջորդում են Թուրքիայում գտնվող հայկական տարածքների 1940-ական թվականների իրավիճակի մասին բազմակողմանի տեղեկագիրը և եզրակացությունը: Ս. Կարապետյանը բավականին ճիշտ կերպով արձանագրում է տվյալ դարաշրջանի ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության առանձնահատկություններից բխող այն իրողությունը, որ հայկական տարածքների վերադարձը ԽՍՀՄ-ին անմիջականորեն կապված է նեղուցների խնդրին: Ավելին՝ նա առաջարկում է տարածքների խնդրի լուծման երեք ընդունելի տարբերակներ: Դրանք են՝ Կարսի, Արդահանի և Սուրմալուի վերամիավորումը ԽՍՀՄ-ին, այլ կերպ ասած՝ 1878-1914 թթ. ռուս-թուրքական պետական սահմանի վերականգնումը: Երկրորդ տարբերակը նախատեսում էր Սան Ստեֆանոյի պայմանագրով որոշված սահմանի վերականգնումը: Դա նշանակում է, որ վերը նշված տարածքներից բացի վերադարձվելու էին նաև Ալաշկերտի հովիտը՝ Բայազետ քաղաքի հետ միասին: Երրորդ տարբերակը նախատեսում էր Կարսից, Սուրմալուից և Ալաշկերտի հովտից բացի ԽՍՀՄ-ին վերադարձնել նաև 6 հայկական վիլայեթներից 3-ը, այն է՝ Երզրումի, Վանի և Բիթլիսի<sup>4</sup>: Ինչպես հայտնի է, Խորհրդային Միությունը այդ երեք տարբերակներից նախընտրել է առաջինը:

Վերոհիշյալ թղթածրարում ընդգրկված են նաև 1946 թ. հունվարի 6-ին Թուրքիայի վարչապետ Շ. Մարաջօղլուի՝ մեջլիսում ունեցած ելույթին անդրադարձող փաստաթղթերը: Նրանցում մանրակրկիտ վերլուծության է ենթարկվում այդ ելույթը և նույնիսկ հերքվում են նրանում տեղ գտած փաստերը<sup>5</sup>:

Ուշագրավ է նաև առանձին գրությամբ պատրաստված և արտասահմանյան մամուլում հրատարակված՝ հայկական տարածքների խնդրին անդրադարձող հոդվածների ժողովածուն<sup>6</sup>: Այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել, թե առաջատար արևմտյան լրատվամիջոցները ինչպիսի դիրքորոշում ունեին Հայկական հարցի նկատմամբ: Չեկուցագրից պարզ է դառնում, որ արևմտյան թերթերի գերակշռող մասը պաշտպանել է Թուրքիայի շահերը, չնայած նրանցից ոչ մեկը չի ժխտել պահանջվող տարածքների հայկական լինելու փաստը:

Բացի այդ, 1945 թվականին Թուրքիային ներկայացված՝ հայկական տարածքները վերադարձնելու պահանջի ուսումնասիրման համար կարևոր են Սփյուռքի հայության կողմից ձևավորված Ազգային խորհուրդների և Հայկական ազգային կոմիտեի կազմած՝ Արևմտյան Հայաստանը Խորհրդային Հայաստանին միացնելու վերաբերյալ խնդրագիր-նամակները, հուշագրերը, որոնք ուղղված էին ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Հայաստանի և միջազգային կազմակերպությունների ղեկավարներին: Եվ չնայած 1945-1946 թթ. ներկայացված այս բոլոր խնդրագրերն այսօր առանձին գործերով պահվում են ՀԱԱ-ում, սակայն գնահատելի է, որ դրանց մի մասը ընդգրկված է N 410 թղթածրարի նյութերում<sup>7</sup>, ինչը այս արխիվային գործը դարձնում է ավելի ամբողջական և արժեքավոր:

Այսինքն՝ ընդամենը մեկ թղթածրարում ամփոփված են խիստ բազմաբնույթ փաստաթղթեր, որոնք, լրացնելով մեկը մյուսին, գրախոսվող գրքից օգտվողներին հնարավորություն են տալիս ծանոթանալ Հայկական պահանջատիրությանն առնչվող նյութերի հետ:

Գրքի **երկրորդ** բաժնում Ա. Կիրակոսյանն ընդգրկել է 1945-1946 թթ. Հայկական

4 Տե՛ս նույն տեղում, էջ 75:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 95-104:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 162-174:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 90-94, 104-144, 153-162, 174-210, 218-228, 227-234:

հարցի հետ կապված ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Թուրքիայի դիվանագիտական փաստաթղթերը և Պոտսդամյան խորհրդաժողովի նյութերը, որոնք դասավորված են ժամակագրական հաջորդականությամբ: Չնայած այս բաժնում բերված նյութերը հրապարակված և շրջանառության մեջ գտնվող փաստաթղթեր են, սակայն դրանք չեն արժեզրկում գիրքը, այլ այն դարձնում են ավելի ամբողջական:

1945 թ. Թուրքիայի հանդեպ ԽՍՀՄ-ի հողային պահանջատիրության ուսումնասիրության համար հատկապես կարևոր նշանակություն ունեն ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովի և Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ս. Սարպերի 1945 թ. հունիսյան հանդիպումներին և Պոտսդամի խորհրդաժողովում կայացած քննարկումներին վերաբերող փաստաթղթերը: Դրանք վկայում են, որ Կարսի և Արդահանի վերադարձի հարցը բարձրացվել է ԽՍՀՄ-ի կողմից և քննարկվել ո՛չ միայն երկկողմ մակարդակով, այլև մեծ տերությունների միջև կայացած հանդիպումների շրջանակներում: Հաշվի առնելով այս նյութերի առաջնությունը՝ Ա. Կիրակոսյանը դրանք ևս ներառել է իր խմբագրած ժողովածուի մեջ<sup>8</sup>:

Գրքի երկրորդ բաժնում ընդգրկված փաստաթղթերից կարևոր են նաև ԱՄՆ-ի պետքարտուղարության<sup>9</sup> և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության<sup>10</sup> դիվանագիտական գրությունները, որոնք ներկայացնում են հայկական տարածքների պահանջատիրության խնդրի հանդեպ ինչպես ԽՍՀՄ-ի և Թուրքիայի, այնպես էլ Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի որդեգրած դիրքորոշումները: Այս փաստաթղթերը վկայում են, որ պաշտոնական Լոնդոնը և Վաշինգտոնը հետևել են իրադարձությունների զարգացմանը և միջոցներ փնտրել Թուրքիայի տարածքային մասնատումը կանխելու համար: Նկատենք, որ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության արխիվում պահվող Հայկական հարցին վերաբերող որոշ վավերագրեր Անիտա Լ. Փ. Բուդեթի խմբագրությամբ հրատարակված «Հայաստան, քաղաքական ու Էթնիկական սահմանները, 1878-1948 թթ.» խորագրով արխիվային փաստաթղթերի ժողովածուից վերահրատարակել են Ջ. Մարրլյանը<sup>11</sup> և Յու. Բարսեղովը<sup>12</sup>: Դրանցից մի քանիսը իր գրքում ընդգրկել է նաև Ա. Կիրակոսյանը՝ վերջում հղումների միջոցով նշելով այդ մասին:

Գրքի վերջում բերված են անձնանունների և տեղանունների ցանկեր, որոնք վերջին տասնամյակում հրատարակվող մենագրություններում անգամ ոչ միշտ են հանդիպում: Այս ամենը վկայում է, որ Ա. Կիրակոսյանը կարողացել է ապահովել փաստաթղթերի ժողովածուի գիտական հրատարակության պատշաճ մակարդակը:

**Ամփոփելով՝** կարող ենք վստահորեն եզրակացնել, որ Արման Կիրակոսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1946 թթ. դիվանագիտական փաստաթղթերում» գիրքը

8 Տե՛ս նույն տեղում, էջ 237-240, 256-267:

9 Տե՛ս նույն տեղում, էջ 240-256: Տե՛ս նաև՝ Foreign Relations of The United States. Diplomatic Papers, The Conference of Berlin (The Potsdam Conference), 1945, vol. 1, Washington, 1960, pp.1015- 1051:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 268-276, 278-293: Տե՛ս նաև՝ Anita L.P. Burdett, Armenia, Political and Ethnic Boundaries, 1875-1948, London, 1998, pp. 667-668, 1021-1030.

11 Տե՛ս Մարրլեան Ջ., Մեծ Բրիտանիա եւ խորհրդային Հայաստանի ու խորհրդային Վրաստանի անունով 1945ին կատարուած հողային պահանջքը, «Հայկազյան հայագիտական հանդես», Պէյրուք, 1998, էջ 293-318:

12 Տե՛ս Барсегов Ю., Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии, т. 2, М., 2005, с.628-630.

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո վերաբացված Հայկական հարցի պատմության աղբյուրագիտական հենքն ամբողջացնելու առաջին լուրջ փորձն է: Նման հարուստ ժողովածուն թանկարժեք նվեր է պատմաբանների, քաղաքագետների և ուսանողության համար: Մակայն Հայկական հարցի՝ տվյալ պատմաշրջանին վերաբերող վավերագրերի մի կարևոր մասը դեռևս պահվում է ԽՍՀՄ-ի այլ քաղաքների, մասնավորապես՝ Մոսկվայի և Թբիլիսիի արխիվներում: Ուստի պետք է հուսալ, որ գրախոսվող գրքի հեղինակը՝ պատմական գիտությունների դոկտոր Արման Կիրակոսյանը, կշարունակի իր նախածեռնած կարևոր գործը՝ հրատարակության ներկայացնելով 1945-1946 թթ. Հայկական հարցի վերաբացման հետ կապված վավերագրերի ամբողջական փաթեթը:

Քրիստինե Ֆ. Մելքոնյան  
*պատմ. գիտ. թեկնածու*

### VALUABLE COLLECTION

Armenia and the Soviet-Turkish Relations in the Diplomatic Documents of 1945-1946, by Arman Kirakosyan edition, Yerevan, “Tigran Mets” Publishing House, 2010, 330 p.

Christineh F. Melkonyan

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Բ (Ը) տարի, թիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010

ՎԵՄ համահայկական համդես